

**ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

<b>Նպատակ</b>	Գյուղատնտեսության համար շրջանառու միջոցների ֆինանսավորում	Գյուղատնտեսության համար հիմնական, ինչպես նաև հիմնական և շրջանառու միջոցների <sup>1</sup> ֆինանսավորում
<b>Արժույթ</b>	<b>&lt;&lt; դրամ</b>	
<b>Գումար</b>	<b>1 000 000 – 33 000 000</b>	<b>1 000 000 – 75 000 000</b>
<b>Ժամկետ</b>	<b>12 – 48 ամիս</b>	<b>24 – 60 ամիս</b>
<b>Տարեկան անվանական տոկոսադրույք<sup>2</sup></b>	<b>12,50%</b>	
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք<sup>2</sup></b>	<b>13,24%</b>	
<b>Սպասարկման [ամենամսյա] վճար</b>	<b>0%</b>	
<b>Տրամադրման [միանվագ] վճար</b>	<b>0%</b>	
<b>Տրամադրման եղանակ</b>	<b>Կանխիկ, անկանխիկ</b>	

**ՎԱՐԿԱՌՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

- <<-ում գրանցված՝ գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ:
- Տարիքը՝ 21 և ավելի: Ընդ որում՝ դիմելու պահին տարիքի և ակնկալվող վարկի ժամկետի գումարը չպետք է գերազանցի 70-ը:
- Բնակություն և առնվազն 6 ամսվա անընդմեջ գյուղատնտեսական գործունեություն ՖԻՆԲԱ-ի սպասարկման տարածքում: Սույն պահանջը չի տարածվում սկսնակ գյուղատնտեսական բիզնեսի<sup>3</sup> վրա, որի ֆինանսավորվող նախագծի ընդհանուր արժեքը չի գերազանցում 5,0 մլն. << դրամը: Այդ դեպքում վարկերը կարող են տրամադրվել ապագա կանխիկ հոսքերի վերլուծության և/կամ այլ պարբերական եկամուտների (օրինակ՝ ամսական աշխատավարձ) հիման վրա:
- Վարկի ծախսածածկման գործակից (հաճախորդի ազատ միջոցներ հարաբերած դիտարկվող վարկի ամսական մարում)՝ նվազագույնը 1.5
- Կապիտալի համարժեքության գործակից (կապիտալ հարաբերած ակտիվների և դիտարկվող վարկի հանրագումարին)՝ նվազագույնը 0.4:
- Համապատասխանություն ՖԻՆԲԱ-ի սոցիալական և բնապահպանական ստանդարտներին:
- Վարկառուն պիտի գործի իր անունից և իր օգտին. արգելվում է վարկ վերցնել հօգուտ երրորդ անձի:

**ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ<sup>4</sup>**

<ul style="list-style-type: none"> <li>• Վարկարժանության գնահատական</li> <li>• Կայուն եկամտի աղբյուր</li> </ul>		
<b>1 000 000 – 2 500 000 &lt;&lt; դրամ</b>	<b>2 500 001 – 5 000 000 &lt;&lt; դրամ</b>	<b>5 000 001 – 75 000 000 &lt;&lt; դրամ</b>
Մեկ երաշխավոր <sup>5</sup>	Երկու երաշխավոր <sup>5</sup>	Մեկ երաշխավոր <sup>5</sup> և լիկվիդային գույքի գրավ <sup>6</sup> , ընդ որում՝ <ul style="list-style-type: none"> <li>• <b>անշարժ գույքի</b> դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի <b>մինչև 80%</b></li> <li>• <b>տրանսպորտային միջոցի</b> դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի <b>մինչև 60%</b></li> <li>• <b>գյուղատնտեսական տեխնիկայի</b> դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի <b>մինչև 70%</b></li> <li>• <b>շրջանառու միջոցներ</b> հանդիսացող ապրանքանյութական պաշարների գնահատված արժեքի <b>մինչև 50%</b></li> <li>• <b>այլ գրավների դեպքում</b> գնահատված արժեքի <b>մինչև 50%</b></li> </ul>

Ընդ որում վարկը կարող է տրամադրվել մեկից ավելի վարկառուների (համավարկառու), որի դեպքում վարկառուի նկատմամբ սահմանված պահանջները տարածվում են նաև համավարկառուի նկատմամբ:

**ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄ**

Վարկը մարվում է մայր գումարից, տոկոսագումարից և սպասարկման վճարից կազմված ամենամսյա հավասարաչափ մարումներով կամ ձկուն գրաֆիկով<sup>7</sup> պահպանելով արտոնյալ ժամկետ տրամադրելու կանոնը: Վարկի ամբողջ ժամանակաշրջանի համար արտոնյալ ժամկետների<sup>8</sup> նվազագույն քանակը պետք է կազմի 3 ամիս: Յուրաքանչյուր 12 ամսում հասանելի է մինչև 9 ամիս արտոնյալ ժամանակաշրջան: Հաջորդական արտոնյալ մարումների<sup>8</sup> թիվը չպետք է գերազանցի 9-ը վարկի ժամկետի ողջ ընթացքում: Հնարավոր է օգտվել գորոյական վճարումներով արտոնյալ ժամանակաշրջանից, երբ մարումները (արտոնյալ կամ ոչ արտոնյալ) կարելի է կատարել 6 կամ 4 ամիսը մեկ: Ընդ որում՝ առաջին 12 ամսվա ընթացքում անհրաժեշտ է կատարել մայր գումարի առնվազն մեկ վճարում:

**Վարկառուն առանց տուժանք վճարելու կարող է վաղաժամկետ՝ ամբողջովին կամ մասնակիորեն, մարել վարկը:** Վաղաժամկետ մարման դեպքում մայր գումարի հետ միասին, համամասնորեն նվազեցվում է վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը (տոկոսագումարներ, այլ վճարներ), բացի այն դեպքերից, երբ վճարողն այլ գրավոր հանձնարարական է տալիս: Չեն նվազեցվում << օրենքով և պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարվող տուժանքներն ու այլ վճարները, և «Սպառողական կրեդիտավորման մասին» << օրենքի 15-րդ հոդվածով սահմանված վճարները: Վարկն ամբողջությամբ վաղաժամկետ մարելիս վարկառուն վճարում է տվյալ օրվա դրությամբ հաշվարկված՝ սպասարկման և այլ վճարները, տոկոսագումարները, մայր գումարը: Ապագա ամիսների վճարումները կարելի է կատարել նախօրոք՝ ներկայացնելով գրավոր հանձնարարական: Ապագա յուրաքանչյուր ամսվա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ. 1) սպասարկման և այլ վճարներ, 2) տոկոսագումար, 3) մայր գումար:

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՈՒՂԱՆՔՆԵՐ**

- **Վարկառուի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում ՖԻՆԲԱ-ն կարող է պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններով նախատեսված կարգով փոփոխել վարկի տոկոսադրույքը:**
- Սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել **ՏՈՒՄԱՆՔ**՝ 1) ժամկետանց մայր գումարի **0,13%-ի** չափով, 2) ժամկետանց տոկոսագումարի **0,13%-ի** չափով:
- Մայր գումարի մարման ժամկետի խախտման դեպքում ժամկետանց գումարի նկատմամբ պայմանագրով նախատեսված տոկոսադրույքի կիրառումը դադարեցվում է և խախտման օրվանից մինչև վարկի մարման օրը կիրառվում է տարեկան **24% տոկոսադրույք**: Եթե վճարվող գումարը բավարար չէ ժամկետանց բոլոր պարտավորությունների կատարման համար, նախ մարվում են վարկատուի այն ծախսերը, որ ուղղված են եղել վճարման ենթակա գումարների ստացմանը, այնուհետև՝ սպասարկման վճարները, տուժանքները, տոկոսագումարները և մայր գումարը: Այս հերթականությունը կարող է փոխվել վարկատուի որոշմամբ՝ վարկառուի գրավոր դիմումի հիման վրա:



- Պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու դեպքում այդ տեղեկությունն ուղարկվում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ ապագայում՝ նոր վարկի համար դիմելիս:
- Պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում ձեր գույքը կարող է բռնագանձվել օրենքով սահմանված կարգով:
- Գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավի անբավարարության դեպքում մարումները կկատարվեն Ձեր այլ գույքի հաշվին:

<b>ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b>	
<b>Տրամադրում տրամադրվող (մաս-մաս)</b>	Առավելագույնը 3 տրանշ, ընդ որում մեկ տրանշի գումարը չի կարող պակաս լինել 500 000 ՀՀ դրամից:
<b>Վարկի պայմանների փոփոխում</b>	ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վարկի վերաֆինանսավորման մերժման կամ վերաֆինանսավորելուց հետո վարկի հետ կանչման վերաբերյալ ծանուցման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրված վարկի վերաֆինանսավորման նպատակով ստորագրվում է նոր վարկային պայմանագիր տվյալ պահին սահմանված գյուղատնտեսական դրամային վարկերի համար սահմանված պայմաններով: Իսկ նախատեսված ժամկետում նոր վարկային պայմանագիր չստորագրելու դեպքում գործող պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը սահմանվում է տարեկան <b>19,9%</b> , ինչպես նաև սահմանվում է վարկի ամսական սպասարկման վճար, փոփոխության կատարման դրությամբ վարկի մնացորդի <b>0,75%</b> չափով: Մինչև փոփոխված ժամանակացույցը գործողության մեջ մտնելը կատարված վաղաժամկետ վճարումների մասով վերահաշվարկ չի կատարվում:

<b>ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>		
<b>Պահանջվող փաստաթղթեր (ներկայացվում են առձեռն)</b>	<b>Ֆիզիկական անձ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Վարկառուի և երաշխավորների նույնականացման քարտերը կամ վերջիններիս անձնագրերը և սոցիալական քարտերը</li> <li>• Եթե վարկառուն <b>անհատ ձեռնարկատեր</b> է, նաև՝ պետական գրանցման վկայականը</li> <li>• Այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի</li> </ul>	<b>Իրավաբանական անձ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Պետական գրանցման վկայականը, տնօրենի ներդիրը</li> <li>• Տնօրենի, բաժնետերերի և երաշխավորների նույնականացման քարտերը կամ վերջիններիս անձնագրերը և սոցիալական քարտերը</li> <li>• Իրավաբանական անձի մասնակիցների պետական գրանցման վկայականի, կանոնադրության և հարկային կողի պատճենները</li> <li>• Այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի</li> </ul>
<b>Վարկի տրամադրման որոշման վրա ազդող գործոններ</b>	<b>Դրական գործոններ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Վարկունակության բավարար մակարդակ</li> <li>• Լավ վարկային պատմություն</li> <li>• Վարկի մարման աղբյուր հանդիսացող գյուղատնտեսությունից ստացվող եկամուտ</li> </ul>	<b>Բացասական գործոններ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Վարկունակության անբավարար մակարդակ</li> <li>• Վատ վարկային պատմություն</li> <li>• Վարկի ապահովվածության բացակայություն</li> <li>• Անհամապատասխանություն վարկառուին ներկայացվող պահանջներին</li> <li>• Կեղծ կամ անարժանահավատ տեղեկության տրամադրում</li> <li>• Այլ վարկային ռիսկեր</li> </ul>
<b>Ժամկետներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում՝ առավելագույնը 3 աշխատանքային օր:</li> <li>• Որոշման մասին հայտ ներկայացնողին գրավոր կամ բանավոր տեղեկացում՝ առավելագույնը 1 աշխատանքային օր:</li> <li>• Վարկի փաստացի տրամադրում՝ հայտը ներկայացնելու պահից առավելագույնը 4 աշխատանքային օր:</li> <li>• Վարկային կոմիտեի որոշման վավերականության առավելագույն ժամկետ՝ 15 աշխատանքային օր:</li> </ul>	
<b>Այլ</b>	Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆԵՍ-ի բոլոր մասնաճյուղերում: <b>Նախքան պայմանագրի կնքումը Դուք կստանաք անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:</b>	

**ՆՇՈՒՄՆԵՐ**

1. Միաժամանակ հիմնական և շրջանառում միջոցներ ֆինանսավորելու դեպքում, շրջանառու միջոցների ֆինանսավորման մասնաբաժինը չի կարող գերազանցել 33 000 000 ՀՀ դրամը:
2. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ վարկի մնացորդից: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը տոկոսագումարները և վարկի տրամադրմանն առնչվող բոլոր այլ պարտադիր վճարները սահմանված կարգով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է ստորև:
3. Սկսնակ գյուղատնտեսական բիզնեսը վերաբերում է այն դեպքերին, երբ պոտենցիալ շահառուն նախորդող 6 ամիսների ընթացքում չունի գործող որևէ այլ բիզնես (գյուղատնտեսության կամ այլ ոլորտներում):
4. Վարկային կոմիտեն կարող է ներկայացնել հավելյալ ապահովման՝ երաշխավորության կամ գրավի պահանջ:
5. **Ֆիզիկական անձի երաշխավորը** կարող է լինել **ներքին**՝ ընտանիքի անդամ, և **արտաքին**՝ այլ անձ: **Եթե կա միայն արտաքին երաշխավոր**՝ վարկառուի ընտանիքի անդամը՝ ամուսնացած լինելու դեպքում՝ կինը/ամուսինը, գրանցվում է որպես փոխկապակցված անձ: **Ֆինանսական երաշխավորը** պիտի ունենա վարկի գումարի հետ համադրելի եկամուտ կամ լիկվիդային գույք: **Իրավաբանական անձի դեպքում մասնաբաժին ունեցող անձանց երաշխավորությունը պարտադիր է:**
6. **Լիկվիդային գույք** պետական գրանցմամբ գյուղատնտեսական տեխնիկա, տրանսպորտային միջոց, անշարժ գույք: Գրավի ապահովագրության կարիք չկա:
7. **Մարման ձկուն գրաֆիկ**՝ գրաֆիկ, որի դեպքում մայր գումարի վճարման չափն ամեն ամիս կարող է տարբեր լինել:

8. Արտոնյալ ժամանակաշրջան՝ ժամանակահատված, որի ընթացքում մայր գումարից մարում չի կատարվում: Արտոնյալ մարում՝ միայն տոկոսագումարից և սպասարկման վճարից կազմված մարում:

9. Տրանշ՝ հաստատվում է ընդհանուր վարկ մեկ վարկային պայմանագիր կնքելով, սակայն տրամադրումը կատարվում է մասնակի, յուրաքանչյուր տրանշի համար նախօրոք հաստատված պայմանների կատարումից հետո: Տրանշերից մեկը կամ մի քանիսը կարող են տրամադրվել նոր վարկի տեսքով՝ տվյալ պահին ՖԻՆԸԱ-ի գործող սակագներով: Տրանշերով վարկի հաստատման դեպքում գրավի պայմանագիրը կարող է կնքվել վարկի ամբողջ գումարի չափով, կամ յուրաքանչյուր տրանշի համար առանձին: Առաջին և վերջին տրանշի միջև տրամադրման առավելագույն ժամկետը՝ 6 ամիս:

**ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱՊՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿ**

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հիման վրա.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A – վարկի սկզբնական գումարը

n – վարկի մարմանն ուղղված վճարի հերթական համարը

N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի հերթական համարը

$K_n$  – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

$D_n$  – վարկի տրամադրման օրից մինչև մարմանն ուղղված n-րդ վճարման օրն ընկած ժամանակահատվածը՝ օրերով

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը

Վարկի գումար	1 000 000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	36 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	11,6%
Սպասարկման վճար	0%
Տրամադրման վճար	0%
Վարկի մարում	3 ամիս արտոնյալ ժամկետ՝ ժամանակահատվածի սկզբից
Տրամադրման օր	05 մայիսի, 2021թ.
Առաջին մարման օր	07 հունիսի, 2021թ.
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք</b>	<b>12,24%</b>

**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

- A1. Մշակաբույսերի աճեցում (ներառյալ՝ բազմամյա և ոչ բազմամյա մշակաբույսեր և այգեգործություն)
- A2. Սերմերի և բույսերի բազմացում
- A3. Մինչև բերքահավաքը մշակաբույսերի պարարտացում, պատվաստում և այլն
- A4. Բերքահավաքից հետո գործունեություն (կարգի բերում, մանրէագերծում, փխրեցում և այլն)
- A5. Անասնաբուծություն (խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, խոզ, հավ և այլն)
- A6. Անասնաբուծության օժանդակող գործողություններ (անասնաբուծություն, պատվաստում, արհեստական բեղմնավորում, խուզում և այլն)
- A7. Չկնաբուծություն և այլ ջրային կուլտուրա
- A8. Մսի պահպանում և վերամշակում (տեղական արտադրության հումքից)
- A9. Չկան, խեցգետնի և մոլյուսկների պահպանում և վերամշակում (տեղական արտադրության)
- A10. Մրգերի և բանջարեղենների պահպանում և վերամշակում (տեղական արտադրության)
- A11. Բուսական, կենդանական յուղերի և ձարների արտադրություն (տեղական արտադրության հումքից)
- A12. Կաթնամթերքի արտադրություն, ներառյալ՝ պանիր և պաղպաղակ (տեղական արտադրության հումքից)
- A13. Հացահատիկի և օսլա պարունակող մթերքների արտադրություն (տեղական արտադրության հումքից)
- A14. Կենդանակերի արտադրություն (հիմնականում տեղական արտադրության)
- A15. Պեստիցիդների, հերբիցիդների և միջատասպան միջոցների արտադրություն
- A16. Պարարտանյութերի արտադրություն
- A17. Գյուղտեխնիկայի վաճառք և վարձակալություն (օրինակ՝ տրակտոր, կոմբայն և այլն) և գյուղատնտեսական կապիտալ ներդրումներ (օրինակ՝ ոռոգման համակարգ)
- A18. Գյուղտեխնիկայի պահեստամասերի վաճառք և գյուղատնտեսական կապիտալ ներդրումներ
- A19. Գյուղտեխնիկայի վերանորոգում և գյուղատնտեսական կապիտալ ներդրումներ
- A20. Գյուղատնտեսության հետ կապված շինությունների և պահեստների կառուցում, ներառյալ՝ դրանցում տեղակայված տեխնիկան
- A21. Մեղվաբուծություն, մեղվաբուծական արտադրանքի արտադրություն, մեղվափեթակների արտադրություն
- A22. Անասունների սպանդանոցներ
- A23. Վայրի միջավայրում հավաքված հատապտուղների և խոտաբույսերի վերամշակում և/կամ չորացում և փաթեթավորում (օրինակ՝ ավանդական բուսական թեյերի պատրաստում)
- A24. Կոսմետիկ և գեղեցկության արտադրանքի արտադրություն, հիմնականում օգտագործելով տեղական աճեցված կամ վայրի միջավայրում հավաքված բույսեր և ապրանքներ,
- A25. Գյուղատնտեսական ապրանքների տեղափոխում հատուկ նշանակության տրանսպորտային միջոցներով՝ ներառյալ, օրինակ, հացահատիկային բեռնատարներ, կաթի բեռնատարներ, անասունների, կենդանի թռչունների և կենդանի ձկների տեղափոխման տրանսպորտային միջոցներ, մեղվաբուծական փոխադրման ծառայություն. (բացառելով պատրաստի սննդամթերքի տեղափոխումը):

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՈՐ ԿԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

- **ՖԻՆՔԱ-ն** իրավունք ունի պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով միակողմանիորեն փոփոխելու վարկի տոկոսադրույքը մինչև «+5» տոկոսային կետով, բայց ոչ ավելի, քան ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը՝ այս մասին վարկառուին ծանուցելով փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ:
- Վարկային պարտավորությունների վերաբերյալ քաղվածքները տրամադրվում են տեղում, իսկ այլ տեղեկատվությունը առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմումի հիման վրա: Քաղվածքների և այլ տեղեկատվության տրամադրումն անվճար է:
- **Դուք կարող եք հաղորդակցվել ՖԻՆՔԱ-ի հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:** էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն առավել հարմար է, քանի որ զերծ է թրթռային տեղեկատվության կորստի ռիսկերից:
- **Ֆիզիկական անձանց առաջարկվող վարկակտեսակների համեմատության և ամենահարմար տարբերակի ընտրության համար կարող եք այցելել «Ձեր ֆինանսական տեղեկատուն» էլեկտրոնային հարթակը [www.fininfo.am](http://www.fininfo.am) հասցեով:**
- Որպես վարկային պարտավորության ապահովման միջոց գույք գրավադրելիս առաջանում է երրորդ անձանց կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն: Նշված ծառայությունների գները և ծառայություն մատուցող կազմակերպությունները ներկայացված են ստորև:

Ծառայություն	Ծառայությունը մատուցող պետական մարմին, համագործակցող կազմակերպություն	Ծառայության վճար
Գրավի պայմանագրի վավերացում	ՀՀ նոտարական գրասենյակներ	3 000 – 20 000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ կադաստրի կոմիտե	3 000 – 30 000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի միավորի վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրում	ՀՀ կադաստրի կոմիտե	500 – 10 000 ՀՀ դրամ
Գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ արդարադատության նախարարություն	2 000 ՀՀ դրամ
Տրանսպորտային միջոցի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հաշվառման-քննական ստորաբաժանումներ	2 000 ՀՀ դրամ
Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հաշվառման-քննական ստորաբաժանումներ	3 000 ՀՀ դրամ
Բանկային փոխանցում (ծառայությունների վճարների փոխանցում)	ՀՀ բանկեր	Յուրաքանչյուր փոխանցման համար 300 ՀՀ դրամ
Որպես ապահովման միջոց գրավադրվող անշարժ գույքի գնահատում անկախ գնահատող կազմակերպության կողմից	«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ «Օլիվեր Գրուպ» ՍՊԸ «Ա.Գ. Բորսա» ՍՊԸ «Վի Էմ - Ար Փի» ՍՊԸ «Գարդի» ՍՊԸ «Ֆիննոու» ՍՊԸ	Կախված գույքի տեսակից և մակերեսից, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ

**ՆՇՈՒՄ. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ն ՎԵՐԱՀՍՎԿՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**